

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

1.09.2014

Հարգարժան ուսուցիչներ եւ աշակերտներ

Առաջին զանգի դողանջները կրկին ձեզ հրավիրում են դասարաններ՝ նոր ակնկալիքներով ու ոգեւորությամբ սկսելու հերթական ուսումնական տարին, սիրով ու եռանդով առաջ տանելու կրթության ու դաստիարակության նվիրական գործը, հաղորդակցվելու գիտության լույսին, ազգային ու համամարդկային մնայուն արժեքներին: Առանձնակի սիրով ուզում եմ շնորհավորել այն մանուկներին, ովքեր առաջին անգամ են ոտք դնելու իրենց դասարաններ եւ այն մանկավարժներին, ովքեր իրենց մասնագիտական աշխատանքում սկսելու են առաջին դասը:

Համոզված եմ, որ ձեզանից յուրաքանչյուրը քաջ գիտակցում է թե իր առջեւ դրված պատասխանատվությունը, թե գիտության ու կրթության արժեքն ու կշիռը արագ փոփոխվող ու զարգացող ժամանակակից աշխարհում:

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ, մաղթում բոլորիդ բարօր եւ խաղաղ հայրենիք, աշխատանքային եւ ուսումնական անսպառ եռանդ, կայուն գիտելիքների հաղորդում ու ձեռքբերում, առողջություն եւ հաջողություններ ձեր բոլոր ազնիվ նպատակներում ու ձգտումներում:

Լավագույն ցանկություններով՝ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյան